

ԲՈՍՏՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

Սույն թվականի սեպտեմբերի 17-ին լրանում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի Բոստոնի Ս. Երրորդություն եկեղեցու օծման 25-ամյակը:

Հայերը Բոստոն են հաստատվել դեռևս անցյալ դարի 80-ական թվականներին: Նախքան սեփական եկեղեցի ունենալը, հայերը իրենց պաշտամունքը կատարել են օտար եկեղեցիներում՝ այցելու կամ Բոստոն հաստատված հոգևոր հովիվների միջոցով: Իսկ ծիսակատարությունները կատարվել են տներում կամ սրահներում:

Բոստոնի հայկական առաջին եկեղեցին գնվել է տեղի եպիսկոպոսական համայնքից 1921 թվականի դեկտեմբերի 21-ին: Շենքը նախապես եղել է հանրային գրադարան: Հայկական եկեղեցու նմանեցնելու որոշ վերափոխման աշխատանքներ կատարելուց հետո, 1923 թվականի նոյեմբերի 11-ին, առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի ձեռամբ և մասնակցությամբ Տ. Բաբգեն եպս. Կյուլեսերյանի, կատարվում է եկեղեցու օծումը՝ անվանվելով Ս. Երրորդություն եկեղեցի:

Եկեղեցու առաջին հոգևոր հովիվը եղել է Տ. Շահե ծ. վրդ. Գասպարյանը:

Ս. Երրորդություն եկեղեցին հայ ժողովրդին ծառայեց մինչև 1961 թվականը: 1962 թվականին այն վաճառվեց՝ երգեհոնը, ջահերը և եկեղեցական բոլոր առարկաները փոխադրելուց հետո:

1952 թվականին Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ նշանակվեց արժանապատիվ Տ. Բաբգեն քահանա Մագուտյանը: Արժանապատիվ տեր հայրը կարճ ժամանակում իր քարոզներով, դասախոսություններով ու ծխական այցելություններով իր շուրջը համախմբեց շրջակա հայությանը:

Եկեղեցու այս աշխուժացման և բարգավաճման առիթով պահանջ զգացվեց ունենալ մի բարեկարգ ազգային ոճով սեփական եկեղեցի: Անդամական ժողովը որոշեց տեղափոխվել առաջնակարգ մի միջավայր և ունենալ հայկական եկեղեցական շինությանը լիապես համապատասխանող մի եկեղեցի: Ընդհանուր անդամական ժողովի և ծխական խորհրդի որոշումներով ու համաձայնությամբ առաջնորդարանի, մի շարք նվիրյալ բարերարների նյութական միջոցներով 1959 թվականի նոյեմբերի 1-ին կատարվեց նոր եկեղեցու հիմնարկեքը՝ ձեռամբ Տ. Բաբգեն քին. Մագուտյանի: Իսկ դեկտեմբերի 20-ին առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը հին Ս. Երրորդություն եկեղեցում ս. պատարագ մատուցեց և այնուհետև, կեսօրից հետո, մի շարք հոգևորական և աշխարհական ներկայացուցիչների և հոծ բազմության ներկայությամբ օծեց նոր եկեղեցու անկյունաքարը: Եկեղեցու հիմքում կետեղվեց մի փոքրիկ սնդուկ, որտեղ որպես հիշատակարան դրվեցին մեկ Ավետարան, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի

նկարը և Նորին Սրբության կենսագրությունը և քարոզները պարունակող հատորը, կառուցվելիք եկեղեցու ամբողջական հատակագիծը, եկեղեցու առաջին հոգևոր հովիվ Տ. Շահե արքեպ. Գասպարյանի գերեզմանից մի փոքրիկ հողակտոր՝ բերված Էջմիածնի Ս. Գայանե վանքի բակից, Զվարթնոցի ավերակներից բերված մի քար, Եղիշեի «Վարդանանց պատմություն»-ից մի օրինակ, Ս. Երրորդություն եկեղեցու և հարակից մարմինների պատմությունները պարունակող տետրերը, եկեղեցու անդամների և եկեղեցու բարերարների անվանացանկերը, հայկական հին դրամներ, «Տաճար» ամսաթերթիկի, «Էջմիածին», «Հայաստանյայց Եկեղեցի» և «Դը Արմինյըն Չըրչ» ամսաթերթերի օրինակներ, Էջմիածնի, Կ. Պոլսի և Երուսաղեմի օրացույցներ, Շինության Հանձնախմբի անվանացանկը, հողի գնումից մինչև օծման օրը եղած պատմությունը և այլ եկեղեցական ու պետական փաստաթղթեր:

Եկեղեցու կառուցումն սկսվեց 1960 թվականի ապրիլի 25-ին:

1960 թվականի նոյեմբերի 13-ին հանդիսավորությամբ բացվեց Հայ Մշակույթի Տունը՝ ձեռամբ առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի: Մշակույթի Տան բացման առթիվ օրհնության աղոթք ասաց առաջնորդ սրբազան հայրը:

1961 թվականի սեպտեմբերի 16-ին, շաբաթ օրը, կատարվեց եկեղեցու Նավակատիքը և Դոնբացեքի պաշտոնական արարողությունը՝ մոմերի աղոտ ու տպավորիչ լույսի ներքո:

Հաջորդ օրը, Խաչվերացի տոնին, կատարվեց եկեղեցու օծումը՝ ձեռամբ գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի և կընքահայրությամբ պրն. Նշան Սիմոնյանի: Իսկ եկեղեցու 16 սյուների վրա կետեղված օծյալ խաչքարերը ունեցան իրենց առանձին կնքահայրերը:

1968 թվականի մայիսի 26-ին բոստոնահայությունը մի նոր ցնծություն ապրեց: Այդ օրը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, որ հովվապետական այցելությամբ գտնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ս. Երրորդություն եկեղեցում ս. պատարագ մատուցեց և հուզիչ ու տպավորիչ քարոզ խոսեց: Նորին Սրբությունն իր քարոզում ասաց.

«Ամենեն ավելի ձեր եկեղեցին սիրեցի: Հոյակապ խորան մը շինած եք: Սուրբ Էջմիածնեն Աստվածամոր գեղեցիկ նկար մը պիտի ղրկեմ ձեր խորանին համար, որպես իմ նվերս»:

Պատի՜վ բոստոնահայությանը՝ իրենց ազգանվեր սքանչելի ոգու համար:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ